

ԶՈՆՈՒՄ ԵՄ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻ  
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԱՐԱԶԴԱՏ ԴԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ  
ԾՆՆԴԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆԵՐ ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ XI-XII ԴԱՐԵՐՈՒՄ

ՀՐԱԶ ԲԱՐԹԻԿՅԱՆ

Բյուգանդական կայսրությանը ծառայած հայերի մասին շատ է գրվել ոչ միայն առանձին դիտական հոդվածների, այլև մենագրությունների ձեռք: Վաղագույն մենագրություններից է Կ. Տեր-Մահակյանի «Հայ կայսերք Բյուզանդիոնի» երկհատոր աշխատությունը, որը ոչ այնքան դիտական հետազոտություն է, ինչքան ընթերցանության հանրամատչելի գիրք<sup>1</sup>: Հարցի վերաբերյալ արժեքավոր են Ն. Ագոնցի դիտական հետազոտությունները, որոնք, տպված լինելով բազմաթիվ հայկական և օտար պարբերականներում, լույս են տեսել առանձին գրքերով՝ հայերեն և Փրանսերեն<sup>2</sup>, ինչպես նաև Պ. Խարանիսի փոքրածավալ, բայց կարևոր դրվույկը<sup>3</sup>: Հայ-բյուզանդական հարաբերությունների ուսումնասիրությանն են վերաբերում Ս. Տեր Ներսեսյանի մենագրությունը և հոդվածների ժողովածուն<sup>4</sup>: Սակայն ամենից ընդարձակն ու հանգամանալիցը, հարկավ, Ա. Պ. Կաժդանի մենագրությունն է, գրված բազմաթիվ, հաճախ մեզ համար անմատչելի սկզբնաղբյուրների և հետազոտությունների հիման վրա<sup>5</sup>: Շատ բարձր գնահատելով հեղինակի կատարած աշխատանքը, պիտի ընդգծել, սակայն, որ այն ունի և թույլ կողմեր, որոնց վրա անհրաժեշտ է հենց սկզբից կանգ առնել: Այդ թերությունները բխում են հեղինակի հայերենին չտիրապետելու և հայկական աղբյուրներին լոկ օտարալեզու թարգմանություններով ծանոթ լինելու հանգամանքով: Բացի այդ, ջանալով «չեղոք» գիրք գրաված լինել հայ-վրացական դիտական վեճերում,

1 Կ. Տ ե ր - Ս ա հ ա կ յ ա ն. Հայ կայսերք Բյուզանդիոնի. Հ. Ա-Բ. Վենետիկ, 1905:

2 Ն. Ա գ ո ն ց. Պատմական ուսումնասիրություններ. Պարիս, 1948: N. Adontz. Etudes arméno-byzantines. Lisbonne, 1965.

3 P. Charanis. The Armenians in the Byzantine Empire. Lisboa, 1963 (ունի հայերեն թարգմանություն. Պ. Խարանիսի Բյուզանդական կայսրության մեջ թարգմանեց Հայկ Պետրյան. Վիեննա, 1966):

4 S. D e r N e g s e s s i a n. Armenia and the Byzantine Empire. Cambridge, Massachusetts, 1947. Ն ու յ ն ի ՝ Byzantine and Armenian Studies. T. I-II, Louvain, 1973. Օտար լեզվով լույս տեսած մի շարք հոդվածների հայերեն թարգմանությունը՝ Հայ արվեստը միջնադարում. Երևան, 1975:

5 А. П. Каждан. Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв. Ереван, 1975 (այսուհետեւ. Каждан. Армяне).

շրջանառության մեջ է գնում «այսպես կոչված հայ-իբերական ընտանիքներ» հասկացությունը և այդպիսիք է համարում զտարյուն հայկական ընտանիքներ թոռնիկյաններին, Բակուրյաններին, Վիկացիներին<sup>6</sup> և Ապուքապներին: Հարցն այն է, որ վրացադավան հայեր, առանձին աղբյուրներում, «վրացի» և «իբեր» են կոչված, բայց նաև հայ, և հեղինակը ոչ մեկիս «նեղացրած» չլինելու համար առաջ է քաշում ահա «հայ-իբերական» ծագման մասին վարկածը: Սարդիս Զաքարյանի մի որդին՝ Զաքարեն, հայդավան էր, մյուսը՝ իվանեն վրացադավան: Հակոբ Կարնեցին (XVII դար) Տայքի Մամրուան գավառի բնակիչների մասին գրում է, թե «կէսն հայ ազգաւ և կէսք կրօնիւք վրացի, բայց հայի լեզուաւ խօսէին»:<sup>7</sup> Արդ, Զաքարյանների ընտանիքը ինչպիսի՞ն պիտի համարենք, հայ-իբերական: Հարցը փայլուն կերպով լուծել էր Ն. Մառը Գրիգոր Բակուրյանի օրինակով, ցույց տալով, որ «վրացի» սոսկ էթնիկ բովանդակություն չունի, այլ զուտ մշակութային... Յուրաքանչյուր հայ-քարգեերոնիկ, անգամ նա, ով ավելի գիտակ է հայերենին, քան վրացերենին, իր պատկերացմամբ վրացի է զտարյուն վրացի հետ»<sup>8</sup>:

Հետագա հետազոտությունները հաստատեցին Ն. Մառի եղբակացության ճշտությունը, պարզեց, որ «իբերացի» Գրիգոր Բակուրյանի Փիլիպուպում կառուցած վանքը հիմնադրումից հարյուր տարի անց բյու-

6 Անիի մայր տաճարի պատերին պահպանված է Հայաստանի և Իբերիայի (Տայքի) կասեպան Բագարատ «Վիկացու» հայերեն արձանագրությունը (շուրջ 1060 թ.): Նրա մասին Հովհաննես Սկիլիցեսի Շարունակողը գրում է. εις το Ἀινίον αποστέλλεται δοιξ Ἄρ μέντος τις. Παγκρατίος τουνομα («Անի է ուղարկվում Բագարատ անունով ոմն հայ գութս») (Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին 10: Բյուզանդական աղբյուրներ, գիրք Գ: Հ ո վ հ ա ն ն ե ս Ս կ ի ի ց ե ս. Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1979, էջ 211: Այսուհետև Հովհաննես Սկիլիցես): Տայքում, ձորդիմ ավագանում, այժմյան էդրեկ (իմա՝ Ագարակ) գյուղում գտնվող և Աստվածածնին նվիրված եկեղեցու պատերին փորագրված է աշխարհի արարչագրության 6515 (մ.թ. սեպտ. 1006—օգոստ. 1007) թվակի Լարիսայի և Մակեդոնիայի զորավար պատրիկ Գրիգորի Հունարեն արձանագրությունը: Նրանում պատրիկ Գրիգորի Հայրը կոչված է պատրիկ Մարտա Վիկացի «իբեր»: Այս «իբեր» ածականի հիման վրա է Ա. Կաֆանը Վիկացիներին «Հայ-իբերական» ընտանիքների թվին գատում: Բայց այս «իբեր» Վիկացու մականունը արձանագրության հունարեն բնագրում բերված է Հայերեն-ացի ածանցով — BHXKATZI /Վիկացի: Քանի որ Հունարենում ը հնչյուն, հետևաբար և տառ, գոյություն չունի «Վիկացի»: Արձանագրության գծագիրը տե՛ս. Բ. Լ ը - տեր և լ. Prolegomenes à une édition critique et commentée des "Conseils et Recits" de Kekauménos. Bruxelles, 1960, p. 31: Արձանագրության ճիշտ ընթերցումը և մեկնաբանությունը տե՛ս. H. B art i k i a n. La genealogie du Magistros Bagarat, catepan de l'Orient, et des Kekauménos.— Revue des Etudes Arménianes. T. II, 1965, p. 261–272. Կ. Ն. Յուզբաշյանի "Греческая надпись патриархия Григория КХХКАТЗИ (1006–1007 гг.) и проблемы авторства "Стратегикона". — Эллинистический Ближний Восток, Византия и Иран. История и филология. Сборник в честь семидесятилетия чл.-корр. АН СССР Н. В. Пигуловской. М., 1967, Հոգվածը իրենից ներկայացնում է մեր նշյալ աշխատության արտագրությունը:

7 Մեծի Վարդանայ Բարձրբերգեցւոյ Պատմութիւն Տիեզերական. Մոսկա, 1861, էջ 181–182 (այսուհետև Վարդան):

8 Մանր ժամանակագրություններ (XIII–XVIII դարեր). Հ. Բ, կազմեց Վ. Ա. Հակոբյան. Երևան, 1956, էջ 554:

9 Հ. Մ ա ր ք Արքան, մոնղոլական հայություն և արմանական հայություն մասին պատմություններ:

զանդական կայսերական և պատրիարքական փաստաթղթերում «Հայկական վանք» է կոչվում, ըստ ալդ փաստաթղթերի նրա վանահայր Հովհաննես Աթմանը Ակն շրջանի Հայ-Հոռոմ Աթմա գյուղից էր սերում<sup>10</sup>: Դեռ ավելին: XI-XII դդ. թվագրվող կուրապաղատ և պրոտոկուրապաղատ Բակուրյանի արճճե կնիքներում նա իրեն «Արշակունի» է համարում<sup>11</sup>:

Ա. Դ. Կաժգանի գրքի երկրորդ թույլ կողմբ հեղինակի գերքննադատական մոտեցումն է: Աշխատության երրորդ դլուխը վերնագրված է «Ենթադրաբար Հայկական ծաղումով ընտանիքներ», որոնց շարքն են դասվում բյուզանդական աղբյուրների՝ Արմենօպուլու բառացի «Հայի ձագ» (Հմմտ. Խոմի՛ Շոսկու և այլ Մաշտարիու և Միթարյաններ<sup>12</sup>, Վաստրանիտաւ և Վարդաններ, Արտանասծու և շատ ուրիշներ, թվով քսան ընտանիք: Այդ «Ենթադրյալ» հայ ընտանիքների շարքն են դասված նաև Ղավրասները: Բաղում աղբյուրներ վկայում են նրանց Հայկական ծագման մասին<sup>13</sup>: Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Նկարագրելով 994 թ. դեպքերը, գրում է. «Ելն տաճիկ դօրուն եգիպտացւոց յաշխարհն Յունաց ... եւ ելն թագաւորին Վասլի ի վերայ նոցա»: Բյուզանդական բանակին «Հետամուտ եղեալ զաւրն Տաճկաց զրադումս սրախողիսող առնէին և դյոլովս ձերակալ, որպէս զժանակ (իմա Յանակ – Յովհաննէսիկ) պատրիկ, որդի

10 Р. Б а р т и к я н. Роль игумена Филиппопольского армянского монастыря Иоанна Атмана в армяно-византийских церковных переговорах при католикосе Нерсесе IV Благодатном (1166–1173). — «Լրաբեր Հաս. գիտ.», 1984, № 6: Հոդվածի հայերեն տարբերակը՝ «Էջմիածին», № է, 1985: Ն ույնի Օ սայթական մասին: Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Նկարագրելով 994 թ. դեպքերը: Այդ «Ենթադրյալ» հայ ընտանիքների շարքն են դասված նաև Ղավրասները: Բաղում աղբյուրներ վկայում են նրանց Հայկական ծագման մասին: Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Նկարագրելով 994 թ. դեպքերը: Այդ «Ենթադրյալ» հայ ընտանիքների շարքն են դասված նաև Ղավրասները: Բաղում աղբյուրներ վկայում են նրանց Հայկական ծագման մասին:

11 W e g n e g S e i b t. 'Արսակէնտ' /Arsakunî – Armenische Aristokraten in byzantinischen Diensten. Jahrbuch der österreichischen Byzantinistik, Bd. 44, ΑΝΔΡΙΑΣ, Herbert Hunger zum 80. Geburtstag, Wien, 1994, S. 354–355.

12 Հենքելով Հայկական «Միթար» անվանն անձանոթ Վ. Լորանի արտահայած կարծիքի վրա, համաձայն որի տոհմանունը իր հունարեն բախտարիու բառն է և «ռազմաշունչ» է նշանակում (Վ. Լ ա ւ ր է ռ տ. Legendes sigillographiques et familles byzantines.— Echos d’Orient 35, 1932, p. 348, n. 2): Հունարենում մաχի բառ կա (նշանակում է «մարտ» «ճակատամարտ»), գոյություն ունի և – արօս ածանց, բայց բախտարիու բառ չկա: Հակառակ որ Վ. Լորանը հետաքայում ուղղել է իր սիմալը և հիշյալը ընտանիքը Հայկական է Համարել (Վ. Լ ա ւ ր է ռ տ. Le Corpus des sceaux de l’Empire byzantin, t. V, 2, p. 249), Ա. Կաժգանը շարունակում է այն «Ենթադրաբար» Հայկական Համարել: Նա գրում է. «Ուղղակի փաստերի բացակայության պայմաններում, տոհմանվան ծաղման, հետևաբար և Մափարաների էթնիկական պատկանելության մասին Հարցը մնում է վիճելի» (նույն տեղում, էջ 100): Իսկ իր հիշյալ աշխատության չորրորդ գլխում («Հայկական ծագումով առանձին արիստոկրատներ») նշում է Մատունու Ուռչայեցու հիշատակած պատրիկ Միթարին և գրում. «Դատելով անունից, նա Հայ էր» և «Միթարի բյուզանդական Մաթիտարների հետ ունեցած Հարաբերության մասին մենք կարող ենք սոսկ գուշակել» (նույն տեղում, էջ 131): Ա. Կաժգանը Հավանաբար չդիտե Անձիս գավառի Վասակավանի իշխան «մեծ Միթարին», որի մոր Սպարամիկի մոտ, ըստ ավանդության, Հայագի Հովհաննես Զմէկիկ կայսրը մանկահասակ Վասիլին և Կոստանդինին (Հետազյում Վասիլի Բ և Կոստանդին Ը) «փախույց ի յանորնեն թագուհույն ... զի մի գեղ մահու տացէ նոցա թագուհին և սպանանից զնոսա» (Մ ա տ թ ե ռ ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի ֆամանակագրություն. Վաղարշապատ, 1898, էջ 7 (այսուհետև՝ Մատթեոս Ուռչայեցի):

13 Р. М. Б а р т и к я н. О византийской аристократической семье Гаврас (Γαυρας - Γαβρας). — ՊԲՀ, 1987, № 3 և 4, և 1988, № 1: Հոդվածաշարքը մեր հունարեն թարգմանությամբ, առանձին դրագի լույս է տեսել Աթենքում. Խ թ ա տ չ Մ. Մ պ ա ր տ ւ կ լ ա ն. 'Η Βιζαντινη ἀριστοκρατική οἰκογένεια τῶν Γαυραδῶν (Γαβραδῶν). Ιστορική, προσωπογραφική και γενεαλογική μονογραφία, 'Αθήνα, 1993.

Խաւրասայ (իմա՝ Ղաւրասայ – Հ. Բ.) և զթորոս բարեպաշտ և աստուածաւսէր ի դաւառէն Հաշտենից և զայլս յաշխարհէն Հայոց յազատաց»<sup>14</sup>:

Վերևում հիշված մենադրությունների հետագոտության առարկան Բյուզանդիայում ծառայած ընդհանրապես հայերի մասին է, բայց կան և աշխատություններ, որոնք հատուկ նվիրված են առանձին բնտանիքների, ինչպես, օրինակ, Տարոնացիներին<sup>15</sup>, Սկերոսներին<sup>16</sup>: Ղավրասների մասին արդեն ասացինք: Ստորև խոսք է լինելու կոնկրետ վասպուրականցիների մասին:

863 թ. Պոսոնի ճակատամարտում զորավար Պետրոնասը, հայազդի կայսրուհի Թեոդորայի և սկեռության երկրորդ դեմք կեսար Վարդասի եղբայրը, ի հետևանս արաբների դեմ տարած փայլուն հազթանակի, բյուզանդա-արաբական հակամարտության նախաձեռնությունն անցավ կայսրության ձեռքը: Խալիֆայության աստղը սկսեց աստիճանաբար մարել: Դրանով իսկ կայսրության համար օրակարգի հարց դարձավ Հայաստանի նվաճումը, մի երկրի, որ 591 թ., Հայաստանի երկրորդ բաժանմամբ, անցել էր կայսրության ձեռքը և այն իրենն էր համարում: 966 թ. նվաճվեց Տարոնը, 1000 թ.: Տայքը: Եերթը հասավ Վասպուրականի Արծրունյաց թագավորությանը: Սկսվեց «սիրալիք» կապերի հաստատումը Վասիլ II-ի և Սենեքերիմ Արծրունու միջև: «Յամի Նիժ թուականութեանս Հայոց (1000 թ.) եղեւ սէր և միաբանութիւն մեծ ընդ թաղաւորն Վասիլ և ընդ Սենեքերիմ արքայն Հայոց»<sup>17</sup>: Այդ «սերը» Վասիլ II-ը «հաստատեց» 1016 թ., երբ «զարթեաւ աստուածասաստ բարկութիւնն ի վերայ ամենայն քրիստոնեական ժողովրդեանն և երկրպագողաց սուրբ խաչին, զի զարթեաւ վիշապն մահաշունչ հանդերձ մահաբեր հրով, եհար զհաւատացեալս սրբոյ երրորդութեանն: Յայսմ ի թուականիս սասանեցաւ հիմունք առաքելականացն և մարդարէականացն, վասն զի օճք թեւաւորք հասին և կամին (այլ ձեռագրերում ավելի ճիշտ «կամէին» – Հ. Բ.) ցոլանալ ընդ ամենայն աշխարհս հաւատացելոց Քրիստոսի. այս է առաջին ելն արեանարբու դաշնացն: Ընդ աւուրսն ընդ այնոսիկ զօրածողով լինէին խուժադուժ ազգն անօրինացն, որք անուանեալ կոչին թուրք, և հասեալ մտանէին յաշխարհն Հայոց ի Վասպուրական գաւառին և անողորմ ի բերան սրոյ կոտորէին զհաւատացեալքս Քրիստոսի»<sup>18</sup>:

Սենեքերիմ Արծրունին, դտնվելով ծանր վիճակում, իր որդի Դավթի գլխավորությամբ Կոստանդնուպոլիս դեսպանություն է ուղարկում, հավանաբար զինական օդնություն ակնկալելով: Էյուղանգիան այդ «օգնությունը» տվեց ի դեմս Մակեդոնիայի Մողլենա քաղաքում դերեվարված բուլզար զինվորների: Լստ Հովհաննես Սկիլիցեսի, կայսրը «զենք

14 Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական. Ա. Պետերոսուրդ, 1885, էջ 262 (այսուհետև՝ Ասողիկ):

15 N. A d o n t z. Les Taronites en Arménie et à Byzance. – Études Armeno-Byzantines. Lisbonne, 1965, p. 197-263: Նույնի՝ Observations sur la généalogie des Taronites, նույն տեղում, էջ 339-345:

16 W e r n e r S e i b t. Die Skleroi. Eine prosopographisch -sigillographische Studie, Wien, 1976.

17 Մատթեոս Ուռհայեցի, էջ 42:

18 Նույն տեղում, էջ 46-47:

կրել կարող բոլոր բուլղար ուազմագերիներին ուղարկեց Վասպուրական»<sup>19</sup>:

Բայց, ինչպես հաստատվում է Հայկական աղբյուրների տվյալներով, Վասիլ II-ի մտահոգությունը Վասպուրականին օգնության հասնելը չէր ընդգեմ թուրքերի, այլ երկիրը ավերակ դարձնելը նրա նվաճումը հեշտացնելու համար: Այդ բուլղար զինվորները (որոնք արգեն բյուզանդական դորք էին ներկայացնում) Վասպուրականի համար տրոյական ձիուգեր խաղացին: Արիստակես Լաստիվերտցու ասելով՝ Վասիլ կայսրը «զզօրսն աշխարհին (բուլղարաց – Հ. Բ.) խարանօք ի մի վայր ժողովէ, որպէս թէ պարգևս տալ նոցա, և գրով զհամար նոցա կալեալ առաքէ զնոսայացելս անդառնալի եկիւք: որք եկեալ զաշխարհս յաւեր գարձուցին: Վայ նոցա գալոյն յարեելս և վայ՝ ուր նոքա անց և գարձ արարին. ահա ազգ չար և անողորմ, ազգ դառնասիլու և հարկանօդ»<sup>20</sup>:

Խոսելով բուլղարական այս զորաբանակի մասին, պետք է հիշատակել և նրա հավանական զորահրամանատարին: Գրիգոր Մագիստրոսը հիշում է Հայաստան եկած «գիշերաբուն բուլղարաց», «աւարարօղ, աւելող վատաշամբաւն Նիկաւղաս»-ին<sup>21</sup>, որ նույնանում է Հովհաննես Սկիլիցեսի «պատրիկ Նիկոլայոս բուլղարի մականունը Քրիսելիոսի» հետ<sup>22</sup>: Այս բուլղար Նիկոլայոսն էր, որ գրավեց Բերկրին արաբներից և Միքայել III Արգիրոս կայսեր օրոք (1028-1034 թթ.) հենց բյուզանդական բանակալթեմ Վասպուրականի կատեպանն էր:

1021-ին տեղի ունեցավ Վասպուրականի Արձրունյաց թագավորության վերացումը: Սենեքերիմ Արձրունին ստիպված եղավ համաձայնել Վասիլ II-ի պահանջին «փոխանակել» Վասպուրականը Սեբաստիայով, իր սեփական երկիրը հանձնել և մտնել կայսրության լծի տակ<sup>23</sup>:

Ամենաեն էլ գարմանալի չէ, որ կայսրությունը Վասպուրականին (ինչպես անցյալում Տարոնին և Տայքին) հեշտ ու խաղազ չտիրացավ, տեղի հայության կողմից հանգիպեց համառ դիմադրության: Վասպուրական բանակաթեմի առաջին գուգոս-կատեպան Վասիլ Արգիրոսը չկարողացավ երկիրը հպատակեցնել: Կայսրը ստիպված նրան պաշտոնանկ արեց, փոխարենը նշանակեց Նիկեֆոր Կոմնենոսին, որը «գործի դնելով և քաղցր խոս-

19 Ioannis Scylitae Synopsis historiarum. Editio princeps, recensuit Ioannes Thurn. Berolini et Novi Eboraci, 1973, p. 352 (այսուհետև՝ Scyl. Հայերեն թարգմանությունը Հովհաննես Սկիլիցես, էջ 84):

20 Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ, աշխատասիրությամբ Կ. Ն. Յուզալյանի. Երևան, 1963, էջ 24-25 (այսուհետև՝ Արիստակես Լաստիվերտցի): Հարցի մասին մանրամասն տե՛ս Բ. Մ. Բարտիկյան. Օ բոլгарском войске в Васпуракане и последних годах царства Аргурийдов. — «Л.րաբեր հաս. գիտ.» 1973, № 10, էջ 88-96:

21 Գրիգոր Մագիստրոսի թղթերը. Ալեքսանդրապոլ, 1910, էջ 234:

22 Հ. Մ. Բ ա թ ի կ յ ա ն. Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի շուրջը: Հովհանների ժողովածու նվիրված ակադ. Աշոտ Հովհաննիսյանի ծննդյան 80-ամյակին. Երևան, 1971:

23 Վասպուրականի Բյուզանդական կայսրության միացման մասին հայ ուսումնական շատ են գրել: Համեմատաբար վերջերս Հարցին անդրադարձել է ավատրիացի բյուզանդագետ Վ. Զայբուլը: Տե՛ս W e r n e r S e i b t. Die Eingliederung von Vaspurakan in das Byzantinische Reich (etwa 1019 bzw. Anfang 1022). — «Հանդես Ամսօրյա», 1978, № 1-12 (լույս տեսած 1980 թ.), այսուհետև՝ 49-66:

քը, և՝ բռնությունը, կարողացավ երկիրը (Վասպուրականը – Հ. Բ.) կայսրին հպատակեցնել»<sup>24</sup>:

Հակառակ Մատթեոս Ուռհայեցու ասածին, թե «ելեալ Սենեքերիմ ամենայն բնաանեօք իւրով և ոամկօք եկն ի Սեբաստիա և անտերացաւ աշխարհն Հայոց ի թագաւորաց և յիշխանաց», դա ամենեին այդպես չէ. Վասպուրականը ոչ հայաթափեց, ոչ էլ անտերացավ իշխաններից: Վասպուրականի զինյալ ուժերն էլ չփոշիացան: Ինչպես մինչև այդ նվաճված հայկական նահանգներում, կայսրությունը այդ ուժերը այստեղ ևս պահպանեց իր նպատակներին օդտագործելու համար: Երբ բուլղարները Պետր Դելյանի (մի շարք աղբյուրների համաձայն հայագդի կոմսածագ Սամուկիլի թոռը) գլխավորությամբ 1040 թ. վերջին և 1041 թ. սկզբին ասլստամբեցին Բյուզանդիայի դեմ, «զօրաժողով արար թագաւորն Հոռոմոց Միխայլն (Միքայել IV Պափլագոնացին – Հ. Բ.) զամենայն աշխարհն Յունաց և այլ ի Հայոց զօրացն, որք ըստ Հոռոմոց իշխանութեամբ էին՝ Սեբաստիա և Տարօն և ամենայն Վասպուրական»<sup>25</sup>. և անթիւ բազմութեամբ համանէր թագաւորն Միխայլ յարեմուտք և գերի առեալ զամենայն աշխարհն Գթաց (իմա բուլղարաց – Հ. Բ.) և զապստամբսն ածէր ի հնազանդութիւն և արար իւր հնազանդ զամենայն աշխարհն և գարձաւ ի Կոստանդնուպոլիս»<sup>26</sup>: Սա ցույց է տալիս, որ Վասպուրականում դեռ 1041-ին գոյություն ունեին թեև Բյուզանդիային ծառայող, բայց հայկական զինյալ ուժեր: Բյուզանդիայում (և ոչ միայն, այլև Սասանյան Պարսկաստանում) հայ զինվորը շատ էր հարգի: Բերենք մի քանի օրինակ: Վաղ միջնադարի համար (VI դար): «Նախկինում կայսերական պալատի պահպանության համար առանձնացվել էին երեք հազար հինգ հազար հարյուրից ոչ պակաս զինվորներ, որոնց սքոլարիոս էին անվանում: Ի սկզբանե անտի սկետությունը սրանց գճարում էր շատ ավելի բարձր ոռծիկ, քան մնացած բոլոր զինվորներին: Անցյալում կայսրերը սրանց բնտրության ժամանակ նկատի էին առնում մարդկանց արժանիքները և հայերին էին տալիս նախապատվությունը»<sup>27</sup>:

Մի օրինակ IX դարից: Թեոփիլոս կայսեր օրոք (829-842 թթ.) Անտոլիկոն, ապա նաև Արմենիակների բանակթեմի աչքի ընկած զորավար Մանուկիլը (ըստ Վարդան Արեւելցու՝ Մամիկոնյան)՝, իսկ ըստ Թեոփիանեսի Շարունակողի՝ Թեոփիլոսի կին կայսրուհի Թեոփորայի հորեղբայրը, «շատ խիզախ մարդ էր..., քանզի ծննդով նա հայ էր»<sup>28</sup>:

24 Հ ո վ հ ա ն ն ե ս Ս կ ի լ ի ց ե ս, էջ 86:

25 Դեռ 1000 թ., երբ վախճանվեց Տայքը Վասիլ Ա-ին կտակած Դավիթ կուրապաղատը և կայսրը վատուած էր, որ Տայքի ավագանին նահանգը հեզ ու հանգիստ չի զիջելու, «Հրամայի զօրացն Զորորոգ Հայոց և Տարօնյ օգնական լինել նմա յոր պէտու և կոչեսցէ» (Ա ռ զ ի կ, էջ 276): Ասել է Տարօնի նվաճումից շուրջ 35 տարի անց, տեղական զինյալ ուժերը շարունակում էին մնալ և կայսրությանը ծառայել:

26 Մ ա տ թ ե ո ս Ո ւ ո հ ա յ ե ց ի, էջ 88-89:

27 Պ ը ո կ ո պ ի ո ս Կ ե ս ա ր ա ց ի. Գաղտնի պատմություն. Թարգմանություն Հին Հունարեն բնագրից, առաջարան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1987, էջ 114:

28 «Մեծի զօրավարին Մանուկի Մամիկոնյոց»: Վ ա ր գ ա ն, էջ 107:

29 Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 15: Բյուզանդիական աղբյուրներ գիրք ե: Թ ե ո վ ա ն ե ս ի Շ ա ր ո ւ ն ա կ ո դ. թարգմանություն բնագրից. առաջարան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1990, էջ 65:

Վերջապես մի օրինակ էլ X դարից: Ըստ Աննա Կոմնենու, Հովհաննես Զմշկիկ կայսրը (969-976 թթ.) «պատերազմում հաղթելով աղանդավոր հայերի, նրանց դերեկարեց և Ասիայից խալյուբներից (Խաղպիք - Հ. Բ.) և հայկական շրջաններից Թրակիա վերաբնակեցրեց և ստիպեց Փիլիպուպոլսի շուրջ բնակվեն... Նրանց նաև վերածեց ամենավստահելի սպահապանների սկյութական (հյուսիսի այլաղդիների - Հ. Բ.) ասպատակությունների դեմ, որ շատ հաճախ բարբարոսները գործում էին Թրակիայի շրջանների վրա... Եվ այսուհետև քաղաքները շուրնչ քաշեցին բազում ասպատակություններից»<sup>30</sup>: Այս հայերը կանոնավոր զորք էլ չէին, կարելի է ասել աշխարհագորայիններ էին:

Ե՞րբ լուծարվեցին Վասպուրականի զինյալ ուժերը: Հավանաբար Շիրակի Բագրատունիների զինված ուժերի հետ միասին: Հայտնի է, որ 1046-ին Բագրատունիների զինյալ ուժերը Վահրամ Պահլավունու գլխավորությամբ մասնակցեցին Դվինի ամիրա Աբուլ-Ասվարի դեմ կայսրության մղած պատերազմին<sup>31</sup>: Բայց հայտնի է նաև, որ Հիսուն հազարանոց հայկական բանակը լուծարեց Կոստանդին IX Մոնոմախիր (1042-1055 թթ.): 1053 թ. դեպքերը նկարագրելուց հետո Հովհաննես Աղիլիցեսը գրում է, թե կայսրը հարկահավաք «Լևոն Սերվիհասի միջոցով լուծարքի ենթարկեց շուրջ հիսուն հազարի հասնող իրերական՝ զորքը, և զինվորների փոխարեն այդ վայրերից բազում հարկեր էր հավաքում»<sup>32</sup>: Ըստ բյուզանդական պատմիչ Զոնարասի, «կային երկրներ, որոնք կայսեր հարկատու չէին, և ամեն տեսակի հարկատվության փոխարեն պաշտպանում էին երկրի դժվարանցանելի վայրերը և հոռմայեցիներին (իմա՝ բյուզանդացիներին - Հ. Բ.) հպատակ երկրների առջև բարբարոսների ճանապարհն էին փակում: Կայսրն այդ երկրների վրա հարկեր նշանակեց և ցրեց պահակազորերը: Դրա հետևանքով բարբարոսների մուտքը հոռմեական շրջանները հեշտացավ: Միանգամայն չնախապաշարված մարզիկ այս անձնավորությանը (կայսեր - Հ. Բ.) պետք է համարեն պետության արևելյան մասը բարբարոսական նիզակի կողմից նվաճվելու պատճառը»<sup>33</sup>:

Վասպուրականի կատեպան Ստեփանոս Լիխուղեսը 1047 թ. սելջուկ զորավար Կուտլումուշի դեմ պատերազմելու համար «հավաքեց տեղական զորքը»<sup>34</sup>, հարկավ, հայկական, որը, սակայն, պարտություն կրեց:

30 Απειλητικաνος. Alexiade. Regne de l'empereur Alexis Ier Comnene (1081-1118). Texte établi et traduit par B. Leib, t. III, Paris, 1945, p. 179-180.

31 Արիստակես Լաստիկ կերտեց, էջ 63:

32 Բյուզանդացիները այս շրջանում Հայաստանն ու Իրերիան շփոթում են իրար: Սկիլիցեսը «Դվինի մոտ» գտնվող Խելիդոնին (բառացի՝ Միծեռնակարերդ) բերդը տեղադրում է Իրերիայում (էջ 150): «Իրերականի» տակ Հայկական զորք է ենթադրվում: Տե՛ս Ե. Հոնիգմանը. Die Ostgrenzen des Byzantinischen Reiches von 363 bis 1071. Bruxelles, 1935, S. 178. Նաև X թագավորությունը առաջականացնում է Հայկական շրջանը («Հայկական պատմության մասին» - Բյուզանդատինա տարեղիրք. հ. 13, թեսաղոնիկ 1985, էջ 469-477).

33 Հովհաննես ներկայացնելու Սկիլիցեսը, էջ 180: Նաև Michaelis Attalioae Historia, rec. Im. Bekkerus. Bonnae, 1853, p. 44.

34 Zonarae Ioannis Epitome Historiarum, ed. L. Dindorfius, vol. IV, Lipsiae, 1868, p. 178.

35 Հովհաննես ներկայացնելու Սկիլիցեսը, էջ 155:

Վասպուրականի հայկական գորամիավորումներ, ինչպես տեսանք, միայն Վասպուրականում չէին ծառայում: Նրանք սեփական գորահրամանատարների գլխավորությամբ ուղարկվում էին Արևմուտք: Դրանով իսկ մերկացվում էին նահանգի սահմանները թշնամու առաջ: Երբ Միքայել IV կայսեր օրոք Վասպուրականի վրա խուժեցին Հերի և Սալմաստի այլազգիները և ասպատակեցին նահանգի թոռնկան գավառը, Խաչիկ իշխանը և իշխան անունով որդին քաջաբար մարտնչեցին նրանց դեմ: Խաչիկ իշխանը «Հառաչելով ապաշաւէր, քանզի աւագ որդին նորա քաջն Հասան և Ճնճղուկն Հանդերձ զօրօքն ի յարեւմուտքն էին զհետ թագաւորին Միհիալի»<sup>36</sup>: Խաչիկ իշխանը և նրա պատանի որդի Իշխանը ընկան մարտի դաշտում: «Եւ զկնի աւուրց ինչ դային որդիք Խաչիկ յարեւմտից. և լուեալ էին զմահն Հօրն իւրեանց և զտղայ եղրօրն, գային սկ զգեստիւք և լացին բազում լալիւնս»<sup>37</sup>: Նրանք առան իրենց հարազատների արյան վրեժը նույն թշնամուց: «Եւ ժողովեալ Հասանայ զօրս իւր արս հինդ հազար և մեծաւ զայրացմամբ իրը կիոցած գազան հասանէր ի վերայ բանակի անօրինաց»: Հասանն ու Ճնճղուկը «քաջապէս բախեալ ի պատերազմ գարձուցին ի փախուստ և կոտորեցին ի նոցանէ արս չորս հազար և դարձան խաղաղութեամբ և մեծաւ ուրախութեամբ և փոխեցին զսե զգեստս իւրեանց»<sup>38</sup>: Ստացվում է, որ Վասպուրականը, դառնալով Բյուզանդիայի մի նահանգը, կայսերական զորք չուներ կամ ուներ, բայց կայսը նախընտրում էր մարտի նետել հայկական գորամիավորումները, վստահ լինելով, որ նրանք քաջաբար կպաշտպանեն հարազատ երկիրը:

Համառոտ գծերով անդրադառնանք նաև Բյուզանդական կայսրության կրոնական քաղաքականությանը նվաճված Վասպուրականում: Ըստ Մատթեոս Ուռհայեցու, Սենեքերիմ Արծրունին Վասիլ II-ին զիջեց «Թեմարերդս զԲ և գիւղս ՏՆ»: Նույն պատմիչի ասելով, Սենեքերիմը Վասպուրականի հայկական վանքերը, թվով 115, Վասիլին «ոչ ետ, այլ պահեաց իւր աղօթարարս»<sup>39</sup>: Բյուզանդիան Վասպուրականում, ի հակաշիռ սրանց, ստեղծեց քաղկեդոնիկ եպիսկոպոսություններ, որոնց բյուզանդական ցուցակները «Notitia episcopatum» պահպանվել են: Քանի որ Վասպուրականում հունական բնակչություն դոյություն չուներ, այդ եպիսկոպոսությունների գերը այն էր, ինչ բյուզանդական կառավարության մեծ աջակցությամբ Թրակիայի Փիլիպուպոլիս քաղաքում Արևմուտքի մեծ դոմեստիկոս Գրիգոր Բակուրյանի կառուցած վանքի՝ տեղական բնակչության մեջ քաղկեդոնականության տարածումը<sup>40</sup>: Հիշյալ Notitia – ներում

36 Մատթեոս Ուռհայեցի, էջ 90:

37 Նույն տեղում, էջ 91:

38 Նույն տեղում, էջ 91-92:

39 Նույն տեղում, էջ 49:

40 Հ. Մարր. Ակադ. սու. 25 և սլ. եզ շատ ավելի ընդարձակ՝ Վ ս ե օ լ օ դ Հ ի կ օ լ ա ե վ. Եдин феодален институт от XI век в нашите земи със специално предназначение. Манастирът на Григорий Бакуриани (Пакуриан) — средище на византийски прозелитизъм между пловдивските армено-павликиани. — Известия на Института за българска история, 1–2, 1951, с. 99–189.

Հանվանե նշված են Վանի, Արճեշի, Ամյուկի, Ոստանի, Մարմետի, Արծկեի, Աղթամարի եպիսկոպոսությունները<sup>41</sup>:

Դառնանք Սենեքերիմի գաղթին:

Թովմա Արծրունու Պատմության Անանուն շարունակողի համաձայն Սենեքերիմը Սերաստիա գնաց 14000 արամքք, «թող ղկանայս և զմանկտիս. և արկան ընդ լծով ծառայութեան Հոռոմոց»<sup>42</sup>: Արիստակես Լաստիկերտցու ասելով, Սենեքերիմն ստացավ «զքաղաքն Սերաստիա և որ շուրջ նովաւ գաւառք»<sup>43</sup>: Հստ Մատթեոս Ուռհայեցու՝ Սերաստիան<sup>44</sup>: Վարդան պատմիչի ասելով «զՍկաստ և յոլով պուաստինս»<sup>45</sup>: Բյուզանգական աղբյուրների Համաձայն՝ Սենեքերիմը ստացավ «Սերաստիան, Լարիսան, Արարան և այլ բազում տիրությներ»<sup>46</sup>:

Սերաստիա քաղաքն ու նահանգը գաղթածների համար ամենակին էլ օտարություն չէին, չըջանը հայարնակ էր: Դեռ Դիոկետիանոս կայսեր կողմից քրիստոնյաներին հալածանքների ենթարկվելու ժամանակաշրջանին վերաբերող մի վկայաբանությունից պարզվում է, որ Արավրակա քաղաքի (Եկեղյաց գավառ) գատական գործերն ուղարկվում էին քննության Սերաստիա նստող դատավորին, ասել է՝ Արավրական Սերաստիայի վարչական տարածքի մեջ էր գտնվում: Հիշյալ վկայաբանության մեջ խոսք է լինում Արավրակա քաղաքից սերող և 296 թ. Սերաստիա գատվելու ուղարկված բարձրաստիճան զինվորական գործիչներ եվստրատիոսի, Օրեստեսի և եվգենիոսի մասին: Նույն խմբից Արավրակա քաղաքի քահանա Ավքսենտիոսը և ումիկ Մարդարփոսը մահապատճի են ենթարկվում իրենց քաղաքում, առաջին երկուսը՝ Սերաստիայում: Վկայաբանության հունարեն բնագրում, որ մեզ է հասել X դարի նշանավոր բյուզանդացի վարքագիր Սիմեոն Մետափրաստեսի միջոցով, ասված է, որ տվյալ ժամանակաշրջանում համայն Մեծ Հայքում (առաս դ Մեցալու Արւենիա, վկայաբանության հայերեն թարգմանությունում՝ «ամենայն աշխարհն Հայաստանեաց») և Կապագովկիայում քրիստոնեությունը լայնորեն տարածված էր, որ հավատացյալները չէին ենթարկվում կայսերական հրամաններին զոհ մատուցելու կուռքերին: Սա օտար աղբյուրներում հազվագեպ հիշատակություն է 301 թ. առաջ Հայաստանում քրիստոնեության լայն տարածման մասին, հարց, որին կանդրադառնանք առանձին աշխատությամբ:

41 Hierocles synecdemus et Notitia graeca episcopatum. Ed. G. Parthey, Berolini 1866; H. Geleze. Ungedruckte und ungenugend veröffentlichte Texte der Notitia episcopatum. München, 1901; E. Honigmann. Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071. Bruxelles, 1961, S 191 sqq.; Michel Thieury. Notes de géographie historique sur le Vaspurakan. – Revue des Etudes Byzantines, t. 34, 1976, p. 159–168.

42 Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց. Ս. Պետերը. 1887, էջ 308:

43 Ա ր ի ս տ ա կ ե ս լ ա ս տ ի վ ե ր տ ց ի, էջ 34:

44 Մ ա տ թ ե ս ս Ո ւ ո հ ա յ ե ց ի, էջ 49:

45 Վ ա ր գ ա ն, էջ 125: «Պոաստինը» հունարեն պրոաստիոնն է: Զին հունարենում նշանակել է քաղաքի արվարձան: Միջնադարում կալված էր նշանակում, որ հաճախ հսկայական չափեր էր ունենում: Տես Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին նշանագրական աղբյուրներ գիրք Բ: Կ ո ս տ ա ն դ ի ն Ծ ի ր ա ն ա ծ ի ն. թարգմանություն բնագրից, առաջարան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1970, էջ 220–221 (այսուհետև՝ Կոստանդին Ծիրանածին):

46 Հ ո գ հ ա ն ն ե ս Ս կ ի լ ի ց ե ս, էջ 86:

Շատ կարևոր է նշել, որ վերոհիշյալ Մարգարիոսը իր կնոջ հետ խոսում էր ողջ Արմենիան ծալեկտաց (Հայերեն տարբերակում «ի բարբառ Հայերեն»), իսկ նահատակների գլխավոր Եվստրատիոսի մականունը ողջ պատրա ծալեկտաց («Ըստ Հայրենի բարբառոյ») Կυրտիկոս էր, այն է՝ «կիւլ-տէր իսիկէս – Ցուսիկ»<sup>47</sup>:

Սեբաստիան Հայկական քաղաք լինելու մասին փաստը հաստատվում է և այն Հանգամանքով, որ Արշակ Բ թագավորը և Հայ նախարարները Ներսես Մեծին կաթողիկոս նշանակելուց հետո, «ի Սեբաստիա և ի Մելիտինէ և ի Մարտիրոսաց քաղաքին մետրապոլիտս կացուցանէին»<sup>48</sup>:

Պրոկոպիոս Կեսարացին իր «Կառուցումների մասին» գրքում Սեբաստիան (և Նիկոպոլիսը) համարում է «Հայաստանի քաղաքներ»: Նախքան Հուստինիանոս I-ի բարենորոգումները Սեբաստիան Առաջին Հայքի կազմում էր, որը հիշյալ կայսրը իր 31-րդ նովեմբերի անվանեց Բ Հայք<sup>49</sup>:

Լևոն VI կայսեր (886-912 թթ.) օրոք Սեբաստիա բանակաթեմից 1000 հայ զինվորներ մասնակցեցին Կրետեին տիրացած արաբների գեմ կազմակերպված նշանավոր արշավանքին (902 թ.): Հայտնի է նաև, թե ովքեր էին նրանց հրամանատարները (5 տուրմարի, 10 դրունգար և 8 կոմես), անգամ նրանց ստացած ոռօճիկի ընդհանուր գումարը (մեկ կենտինար, 13 լիտր և 24 դահեկան, ընդհամենը 113 լիտր և 24 դահեկան՝ Մեկ լիտր ոսկին հավասար էր 72 ոսկեդրամի, ուստի՝ 8160 ոսկեդրամ)՝<sup>50</sup>

Սեբաստիայի Հայկական զորքի (979 թ.), քաղաքի և շրջանի այլ քաղաքների հայ եկեղեցիների, Հայադավանների հալածանքների մասին վկայում է Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը: Նա գրում է. «Այլ յորժամ էր ի Բաղդադ թագաւորն Վարդ (ապստամբ Վարդաս Ակերոսը – Հ. Բ.) և խաղաղանայր թագաւորութիւն Վասիլին՝ (Կայսր Վասիլի II-ը – Հ. Բ.) կամեցաւ յազգէն Հայոց, որ ընդ իւրով թագաւորութեամբն անցուցանել ի Մակեդոնիա ընդդէմ Բուլղարացն... Եւ կանացի հովիւքն և մետրապոլիտն Սե-

47 Վկայաբանության Սիմեոն Մետաքրաստեսի Հունարեն բնագիրը՝ “Աֆլատուս տառագության մարտրակունք” Անտրատիոս, Անչենտիոս, Եսպերտոս, Մարձարուս, և Օքետոս. Մ 1-ց ո ն է. Patrologia graeca. T. 116. col. 467-506. Հին հայերեն թարգմանությունը՝ Լիակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան, հ. թ. Վենետիկ, 1813: «Մարգարիոսը» (Մարձարուս), Հարկավ. Մարտայր Կամ Մարտայր (այսինքն «այր արի») չէ, ինչպես ստուգաբառում է Մ. Ավերյանը, այլ բյուզանդական աղբյուրներից քաղ Հայոցի «Մարգարիոսը» (Մարձարուս), Հայացած մարդ էթնոսը (Ղինդոսի տեսօբարդի – Naturalis historia VI, 10, որ ն. Աղոնցը սրամառեն ուղղում է և լրացնում (ար)տեռոմարդ): Հ. Ա Ճ ո հ Ա. Արմենիա և այլ պատմություններ պահպան է լրացնում (ար)տեռոմարդ: Հ. Ա Ճ ո հ Ա. Արմենիա և այլ պատմություններ պահպան է լրացնում (ար)տեռոմարդ: Հ. Ա Ճ ո հ Ա. Արմենիա և այլ պատմություններ պահպան է լրացնում (ար)տեռոմարդ:

48 Յովհաննու կաթողիկոսի Դրամիանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 47-48:

49 Պ ռ ո կ ո պ ի ո ս կ ե ո ա ր ա ց ի, էջ 195, 303:

50 Կ ո ս տ ա ն դ ի ն Ս ի ր ա ն ա ծ ի ն, էջ 145, 146:

բաստիոյ սկսան նեղել զագգն Հայոց վասն հաւատոյ. և զբոնութիւն ի ձեռն առեալ սկսաւ տանջել զքահանայս վասն հաւատոյ, և զգլխաւոր քահանայսն Սեռաստիոյ քաղաքին երկաթեղէն կապանօք հասուցանէր ի դուռն թագաւորին... իսկ այլք յաննշան քահանայիցն և երկու եպիսկոպոսուսը Սերաստիոյ և Լառիսոյ, Սիօն և Թովհաննէս, ի ձեռն նոյն մետրապոլիտին ընկալան զժողովն Քաղկեդոնի... եւ յայնմէտէ արգելին զժամաճայն Հայոց ի քաղաքէն Սերաստիոյ»<sup>51</sup>.

ԽI դարի սկզբում Սեռաստիան նույնանուն բանակաթեմի կենտրոնն էր: Էրկելերը նշում է, որ ԽI դարի դատավոր-պրետորների ցուցակում բացակայում է Սերաստիայի պրետորը և դա բացատրում է աղբյուրների անբավարարությամբ: Հարցին հետաքրքիր բացատրություն է տալիս Գ. Գ. Լիտավրինը: Նա դրում է, որ Սերաստիան Սենեքերիմ Արծրունուն տրվելու առնչությամբ Սերաստիա բանակաթեմը ժամանակավորապես միացվեց Կապագովկիա բանակաթեմին և դադարեց որպես այդպիսին գոյություն ունենալուց<sup>52</sup>: Սա ավելի հավանական է թվում, հատկապես եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ ըստ Հովհաննես Սկիլիցեսի, Սենեքերիմը, դալով Սերաստիա, կայսրից «ստացավ պատրիկի պատվաստիճանը և Կապագովկիայի զորավարի (իմա դուքս-կատեպանի – Հ. Բ.) պաշտոնը»<sup>53</sup>:

\* \* \*

Արծրունիների թագավորական տան վերածվելը բյուզանդական արիստոկրատական ընտանիքի տեղի ունեցավ 1021 թ. Սենեքերիմ Արծրունու Սեռաստիա կատարած գաղթի հետ միաժամանակ: Բայց Սենեքերիմն ու նրա անմիջական հաջորդները որդիները, Սերաստիայի Հայոց շրջանում շարունակում էին «Հայոց թագավորներ» հորջորջվել: Մատթեոս Ուռհայեցին Սենեքերիմի վերաբերյալ գրում է. «մեռաւ և Սենեքերիմ թագաւորն Հայոց»<sup>54</sup>, որից հետո «հաստատեալ լինէր թագաւորական իշխանութիւնն տանն Հայոց յաւագ որդին իւր ի Դաւիթ»<sup>55</sup>: Մատթեոս Ուռհայեցին սրան էլ է «Հայոց արքա» Հորջորջում: «Յայսմ ժամանակի մեռանէր արքայն Դաւիթ որդին Սենեքերիմայ արքային Հայոց, և տայ զիշխանութիւն հայրենեաց իւրոց՝ ի յեղբայրն իւր յԱտոմ»<sup>56</sup>:

51 Ա ս ո դ ի կ է 201–202:

52 H. G l y k a t z i - A h r w e i l e r. Recherches sur l'administration de l'Empire Byzantin aux IX-XI siècles. Athènes–Paris 1960, p. 83-85. "Советы и рассказы" Кекавмена. Сочинение византийского полководца XI века. Подготовка текста, введение, перевод и комментарий Г. Г. Литаврина, М., 1972, с. 590.

53 Հ ո գ հ ա ն ն ե ս Ս կ ի լ ի ց ե ս, է ջ 86:

54 Մ ա տ թ Պ ս ո ս Ո ւ ո հ ա յ ե ց ի, է ջ 55:

55 Նույն տեղում:

56 Աղբյուրները շեն պարզաբանում, թե ինչ էր իրականում իրենից ներկայացնում այդ «իշխանութիւն հայրենեաց իւրոց»—ը: Եթե Սենեքերիմի ստացած պաշտոնն էր, ապա Կապագովկիա բանակաթեմի զորավարինը դուքս-կատեպանի, թեև դա Սենեքերիմի ժամանգների համար, որոնք հիշվում են դեռ 1079 թ., Մանդալե եղբայրների կողմից Գագիկ Ա-ի սպանության տարին, այնքան էլ հավանական չէ:

57 Մ ա տ թ Պ ս ո ս Ո ւ ո հ ա յ ե ց ի, է ջ 65:

Սակայն ըստ բյուզանդական կայսերական գաղափարախոսության, աշխարհում կա մեկ թագավոր, նա, ով նստում է Կոստանդնուպոլսի գահին: Աշխարհի մնացած վեհապետներին տրվում են տարբեր անվանումներ, բայց ոչ թագավորի: Վասպուրականի Արծրունի թագավորը գաղթից մեկ գար առաջ անգամ բյուզանդական կառավարության համար սոսկ արխոնտ էր՝ իշխան, 908 թվականից սկսած, երբ Վասպուրականը թագավորություն հոչակվեց, Շիրակի Բագրատունիների թագավորի նման նա «արխոնտների արխոնտ» իշխանաց իշխան էր: Հովհաննես Սկիլիցեսը Սենեքերիմ Արծրունուն համարում է արխոնտ<sup>58</sup>, այն դեպքում, երբ Կոստանդին VII Ծիրանածին կայսրը 956/957 թթ. ավարտված իր «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» գրքում նրա մասին գրում է, թե բյուզանդական կառավարության պաշտոնական գրությունները առաքվում են «Ասպուրականի, այն է՝ Վասպուրականի իշխանին, որ այժմ արխոնտների արխոնտի (իշխանաց իշխանի) պատիվն է ստացել»<sup>59</sup>: Նկատի ունի Գագիկ Արծրունու կողմից 908 թ. Վասպուրականի թագավորության հոչակման փաստը: Ուստի, Սենեքերիմ Արծրունին և նրա ժառանգները Բյուզանդիայի համար թագավոր չէին: Հովհաննես Սկիլիցեսը, ինչպես տեսանք, պարզ գրում է, որ Սենեքերիմը Սեբաստիա տեղափոխվելով, ստացավ «Կապաղովկիայի զորագարի» պաշտոնը, ասել է՝ Կապաղովկիա բանակաթեմի դուքսի կամ կատեպանի պաշտոնը<sup>60</sup>:

Բյուզանդիան իր տարածքում երկրորդ թագավոր չէր հանդուրժում<sup>61</sup>:

58 Հ ո վ հ ա ն ն ե ս Ս կ ի լ ի ց ե ս, էջ 86:

59 Կ ո ս տ ա ն դ ի ն Ծ ի ր ա ն ա ծ ի ն, էջ 151:

60 Նրա պաշտոնը պիտի նման լիներ մի քանի տասնամյակ անց Գրիգոր Մագիստրոսի վարած պաշտոնին, որի մասին հիշատակում է Ասորոց կաթողիկոսին հղած թղթի վեճագրում «Վասպուրականի և Տարօնի գուբը, Արշակունիք»: Կոչառիսի 1051 թ. արձանագրության մեջ «Գրիգոր Մագիստրոսին կիտաւնտին եւ տուկին Վասպուրականի եւ Տարօնու Արշակունոյն» (Վիմական տարեգիր, կազմեաց Կ. Կոստանեանց. Ս.-Դատերուրգ, 1913, էջ 23): Հիշյալ տիտղոսաշարքը վերջերս հաստատվեց և Մագիստրոսի բյուզանդական արճեն կնիքների մակագրությամբ: «Կύριε Յօηթει τῷ σφ δουλώ Γρηγόριον τον Ἀρσακίδην» («Տէր οὐδένεω δωπιάζεις ρον Գρիգοροյ Արշակունιոյն»). – В. С. Шарадровская. Поправки и дополнения к "Каталогу моливдовулов" Б. А. Панченко. – Византийский временник, т. 38, 1977, с. 109).

Նաև «Կύριε Յօηթει τῷ δουλώ σου Γρηγορίῳ μαγιστρῳ ἐπὶ τοῦ κοιτωνὸς δουκὶ Βαασπρακανίας καὶ τοῦ Ταρων τῷ Ἀρσακίδῃ» («Տէր οὐδένεω δωπιάζεις ρον Գրիգοροյ մագիստροսի, կիտաւնտին, գուբը Վասպուրականի և Տարօնու Արշակունոյն») – W. Seibt. 'Αρσακίδης /Aršakuni – Armenische Aristokraten in byzantinischen Diensten. Jahrbuch der österreichischen Byzantinistik, Bd. 44, ΑΝΔΡΙΑΣ, Herbert Hunger zum 80. Geburtstag, Wien, 1994, S. 350-352: Գրիգոր Մագիստրոսը իր մի այլ թղթում իրեն կոչում է «Վասպուրականի և Տարօնոյ և Մանազկերտի, Արծիոյ, Բերկոյ, Միջտկետաց տէր և Մօնումախին (Կոստանդին IX Մոնոմահ կայսեր, 1042-1055 թթ.-Հ. Բ.) մագիստրոս, վիստ և տուկ» (էջ 213): Հասկանալի է, այդ նահանգների, շրջանների կառավարումը նա գլուխցորեց առանձին-առանձին կամ նրանցից երկուսը միասին տարբեր ժամանակներում: Գրիգոր Մագիստրոսը «տուկ» (իմաց գուբը) տերմինը մի այլ թղթում բերում է ըստ Հայոց վաղեմի ավանդության: Տարօնի դքսություն-կատեպանությունը կոչում է «Տարօն աշխարհի բգեշխութիւն» (էջ 48):

61 Մանրամասն տե՛ս Հ. Բ ա ր թ ի կ յ ա ն. Բյուզանդիան և Հայ պետականությունը X-XI դարերում. – «Լրաբեր Հաս. դիտ.», 1996, № 1, էջ 17-29: Հայտնի է, որ Արշակ Արշակ Հետո «ոչ եւս կացուցին թոյնք ի բաժին իւրեանց թագաւոր, ... աշխարհին իւրեանց մասինն կացուցին թոյնք կոմէսս իշխանս» (Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Հարութիւնեան. Տփդիս, 1913, էջ 316):

Սենեքերիմ Արծրունու ժառանդներ Ատոմն ու Ապուսահլը պարզ չէ ինչքան կառավարեցին իրենց վստահված շրջանները: Նրանք թեև հիշվում են դեռ Կոստանդին X Դուկաս (1059-1067թթ.), Ռոմանոս IV Դիոդենսի (1068-1071թթ.) և Նիկեփոր III Բոտանիասեսի (1078-1081թթ.) օրոք, բայց ոչ որպես կառավարիչներ: Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության մեջ նրանց մասին ասված է. «Յայնժամ (1061թ.) թագաւորքն՝ իշխանքն Հայոց Գագիկ Անեցի և Ատոմ և Ապուսահլ որդիք Անեքարիմայ»<sup>62</sup>:

Բյուզանդիայում հաստատված Սենեքերիմի որդիներն ու իշխանները հլու հնականդ չին ծառայում կայսրությանը: Մատթեոս Ուռհայեցին, բացի Դավթից, շատ հաճախ հիշատակում է Ատոմին և Ապուսահլին, որոնք մատնիչի կողմից ամբաստանվեցին Միքայել IV Պաֆլադոնացի (1034-1041թթ.) կայսեր դեմ ապստամբություն նյութելու մեջ, թե «կամին ապստամբել ի վերայ քո և յարուցանել քեղ վիշտս և հալածանս»<sup>64</sup>: Կայսրը կարդագրեց նրանց Կոստանդնուպոլիս բերել: Անբաստիա ժամանեց կայսերական զորք նրանց ձերբակալելու: Հայերը Սերբաստիայում այնքան հզոր էին իրենց գդում, որ դեռևս 1016թ. թուրքմենների դեմ պատերազմի դուրս եկած և 1021թ. Սենեքերիմի հետ Սերբաստիա դաղթած իշխան Շապուհը, դիմելով Ատոմին և Ապուսահլին, ասաց. «Կամի՞ք զի զօրսդ Հոռոմոց ցիր ու ցան ածեմ ընդ երեսս դաշտաց»: «Եւ արար զրահսն

62 1551 և 1553թթ. արտադրված Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության ձեռագրերում «Թագաւորքն»-ի փոխարեն գրված է «Թագաւորն», ուստի պարզ չէ, «Թագաւոր» է միայն Գագիկ Ալ-թ թե՞ բոլոր երեքն էլ: 1079թ. դեպքերը նկարագրելիս պատմիչը նշում է «ամենայն ցեղն Սենեքարիմայ Ատոմ և Ապուսահլ և այլ ամենայն իշխանքն Հայոց» (Մ ա տ թ ե ռ ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 220):

63 Նույն տեղում, էջ 138:

64 Նույն տեղում, էջ 82-83: Կարծես այս դեպքին են վերաբերում XI գարի բյուզանդական Հայագագի բարձրաստիճան գործիկ՝ Կեկավմենոսի հետեւալ ինուքերը, որոնց հանգիպում ենք նրա նշանագործ աշխատության մեջ. «Եթե պատահի սեփական երկրում թերգեր (ամրացված քաղաքներ - Հ. Բ.) ունենաս կամ դյուզեր, գրանց տոպարիք լինես կամ էքսուսիաստեսը, քեղ չմոլորեցնեն գանձերը կամ պաշտոնները, կայսրերի մեծ խոստումները և հանկարծ երկիրդ տաս կայսեր, փոխարենը ստանալու համար դրամ ու կալվածներ թեկուղ տվածիդ քառապատիկը: Պահպանիր քո երկիրը թեկուղն փոքրիկ ու չնշին, քանզի նախընտրելի է կայսեր ինքնիշխան բարեկամը լինել, քան ստրուկն ու հպատակը: Դու կայսեր և բոլոր մոտ այնքան հարգանք, պատիկ, գովե ու փառք կվայելես, քանի դու, երեխանները քո ու նրանց երեխանները երկրիդ տերն եք: Եթե զրկվե քո երկրից, տապակես իշխանությունիցդ, ճիշտ է, սկզբնական շրջանում պիտի վայելես կայսեր սերը, բայց քիչ անց նա քեղ պիտի արհամարհի, նա քեղ բանի տեղ չի գնելու ե այն ժամանակ պիտի համոզվես, որ ստրուկ ես և ոչ բարեկամ: Այն ժամանակ քո ստորագրյալն անգամ քեղ համար պիտի սարսափեի դառնա, եթե նրան նեղացնես, զգնս կայսեր մոտ և քեղ կամբաստանի, որ իբր նրա գեմ ազակ ես յոյութում: ... Բացառված չէ, որ կայսրն իմանա, որ քո դեմ ներկայացված մեղաղանքները անհիմն են, սակայն քեղ շնորհածը ետ առնելու համար և իր խոստացածք չկատարելու համար անտես կանի արդարությունը»: (Հատվածի հայերեն թարգմանությունը Հ ո վ հ ա ն ն ե ս Ս կ ի ւ ի ց ե ս, էջ ԽХIII-XXIV: Ավելորդ չէ նշել, որ Կեկավմենոսի պապը Մեծ Հայքի Տօթիոն, var. Տիթիոն (Տովիոն, Տիփիոն, Տիկինիոն) բերդին մոտիկ գտնվող շրջանի տոպարին էր: Բերդի տեղագրության մասին արտահայտված բազմաթիվ կարծիքները տե՛ս «Советы и рассказы Кекавмена», с. 410-414. Հովհաննես Սկիլիցեսը «Անիի տոպարիս» է անվանում Հովհաննես-Մերտս Բագրատունուն, իսկ նրա եղբորը՝ Աշոտին «Մեծ Հայքի էքսուսիարիս» (Նույն տեղում, էջ 108, 146): Հովհաննես – Աշոտ ընդհարման առթիվ Աշոտը դարձավ «գրուց աշխարհին թագաւոր ամենայն տանն Հայոց և Յովհաննէս ... թագաւոր ի քաղաքն յԱնի» (Մ ա տ թ ե ռ ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 10):

եօթն կը կնակի և զարկանէր թրով ի վերայ և ի վայր հեղոյր մանր զերկաթն»<sup>65</sup>:

Այդպէս անհնագանդ էին Ատոմն ու Ապուսահլը բյուզանդական իշխանությունների հանդեպ անգամ Ռոմանոս IV Դիոգենես կայսեր իշխանության օրոք և վերջինս այդ պատճառով «ընկէց յերեսաց զորդիք թաղաւորացն»<sup>66</sup> Հայոց զԱտոմ և զԱպուսահլ»<sup>67</sup>:

Հակառակ Սենեքերիմի որդիների այդպիսի բուռն գործունեության, նրանց մասին աղբյուրների համեմատաբար հարուստ տեղեկություններին, բյուզանդական աղբյուրներում նրանք հայտնի չեն: Հայտնի են իշխանավորներ, որոնք «Սենեքերիմյաններ» են կոչվում (Տեսաշերթ), անկասկած պատկանում են Սենեքերիմ Արձրունու ընտանիքին կամ սերում են նրանից: Որպես կանոն ազգանունը հայտնի է «Սենեքերիմ» ձեռվ: Ալեքսիոս II կայսեր (1081–1118 թթ.) «մտերիմն» է համարվում Թեոդորոս Սենեքերիմը, որը կայսեր հրամանով վանքերին հող էր բաժանում<sup>68</sup>: XI–XII դդ. թվագրվող իր արճճե կնիքով հայտնի է մայրապետ Զոյե Սենեքերիմը<sup>69</sup>: Նիկետոս Խոնիատեսը հիշում է ոմն զորահրամանատար Սենեքերիմի (հայտնի չէ, անուն է, թե մականուն): Նրա գլխավորած զորամասը գտնվում էր Մակեդոնիայի Քսանթե քաղաքում<sup>70</sup>: Նա կամ նրա համանուն մի Սենեքերիմ 1024 թ. էպիրոսի Նիկոպոլիս քաղաքի կառավարիչն էր<sup>71</sup>: Վերջապես առկա է Սինաքեր անունը կրող մի կնիք, որի տիրոջը Ա. Կաժդանը ենթադրաբար Սենեքերիմյան է համարում<sup>72</sup>:

Սենեքերիմի հետ իր տիրույթները Բյուզանդիային զիջեց Յահյա Անտիոքացու կողմից իրն ալ-Դայրանի կոչվածը: Փոխարենը նա ստացավ «Լայնատարած կալվածներ, բազում դրամ և բարձր տիտղոսներ»<sup>73</sup>: Իրն ալ-Դայրանին նույնացվում է Վասպուրականի Անձեացիք գավառի «թագավոր» Դերենիկի հետ: Է. Հոնիգմաննը նրան համարում է Սենեքերիմի եղբորորդի<sup>74</sup>: Վ. Խոզենը՝ Սենեքերիմի եղբայրը<sup>75</sup>: Վարդան պատմիչի ա-

65 Մ ա տ թ ե ռ ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 82-83:

66 Այդպէս է բնագրում: Ատոմն ու Ապուսահլը, ինչպես և Դավիթն ու Կոստանդինը, եղբայրներ էին, մեկ հոր Սենեքերիմի որդիները: Տե՛ս Մ ա տ թ ե ռ ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 55:

67 Նույն տեղում, էջ 198:

68 Կ ա յ ա հ. Արմյան, ս. 35.

69 Նույն տեղում:

70 Նույն տեղում, էջ 36:

71 Նույն տեղում:

72 Նույն տեղում: XIII դ. հիշում է Միքայել Սենեքերիմը (Մιχաήլ Տեսաշերթ), գիտնական և հոետոր Թեոդորոս II Լասկարիսի արքունիքում: Միքայել VIII Պալեորդոսի թագավորության ժամանակ (1259–1282 թթ.) ստացավ մեսաղոնի և պրոտասեկրետի պաշտոնները: Ձեռագիր վիճակում են գտնվում Հոմերոսի պեմբերին նրա նվիրած մեկնությունները: Լույս են տեսել սոսկ առանձին հատվածներ “Ելլուրիկա” հանդեսում (հ. 35, 1984, էջ 151-156): Նրա մասին՝ C. N. Constantine's Higher Education in Byzantium in the Thirteenth and early Fourteenth Centuries. Nicosia, 1982, p. 19: եվ Անդրոնիկոս II Անգելոսի (1282–1328 թթ.) իշխանության օրոք պինկեռնեսի (կայսեր մատովակի, սեղանապետի) պաշտոնը վարած Անգելոս Սենեքերիմը:

73 Իմператор Վասիլիй Բոլգարօյցա. Извлечения из Летописи Яхьи Антиохийского. Издад, перевед и объяснил В. Р. Розен. Приложение к XLIV тому "Записок" Императорской Академии наук, СПб., 1883, №1, с. 62.

74 E. H o n i g m a n n . Die Ostgrenze, S. 168.

75 И м п е р а т о р Վ ա ս ի լ ա յ, ս. 374, պր. 376.

սելով նա Սենեքերիմի եղբորորդին էր<sup>76</sup>: Բյուզանդիայում նրա գործունեության մասին ազբյուրներում տեղեկություններ չկան:

Սենեքերիմի հետ Բյուզանդիա տեղափոխվեց և վերկում հիշված Վասպուրականի Խաչիկ իշխանի Հասան որդու որդի Ապլղարիպ Արծրունին: Մատթեոս Ուռհայեցին նրան Տարսոնի կառավարիչ է Համարում, որի մոտ խնամության Հարցով գնաց Գագիկ Ա-ը. «Գագիկ արքայ Հայոց վառեալ զգունդ զօրաց իւրոց և գնաց էջ ի Տարսոն քաղաքն առ Ապլղարիպն իշխանն Հայոց որդւոյ Հասանայ որդւոյ Խաչիկ Խլին առն քաջի ի Վասպուրական գաւառէ»<sup>77</sup>: Վարդանի ասելով, Խաչիկի որդի Վասպուրականի իշխան Ապլղարիպը «ընդ ձեռամբ ունէր զՄիս, զԱտանայ, զՊապան և զԼամբրոն»<sup>78</sup>:

Սենեքերիմ Արծրունու տոհմից բացի Բյուզանդիայում աչքի ընկան Վասպուրականից դաղթած վասպուրականցի իշխանական այլ ընտանիքների ներկայացուցիչներ ևս: Վերևում խոսք եղավ վասպուրականցի իշխան Խաչիկի ու նրա որդիներ Հասանի և Ճնճղուկի մասին: Ահա այս Ճնճղուկը բյուզանդական ծառայության մեջ վասպուրականցի Հայերի հենց Ճնճղուկ տոհմանունը կրող արիստոկրատական ընտանիքի սկիզբը դրեց: Ինչպես է այդ տոհմանունը արձանագրված բյուզանդական աղբյուրներում: Հարցն այն է, որ խնդրո առարկա տոհմանունը չի կարող հունարենով ճշգրիտ արտահայտվել: Հունարենը չունի «δ» հնչյունը, հետևաբար և տառը, հույնը ոչ մի կերպ չի կարող այն արտասանել (ասենք, որ անգամ արևմտահայը չի կարող այն արտասանել, նրա համար այն «δ» է հնչում), հույնը չի կարող արտասանել և «χ» հնչյունը, հետևաբար չունի և համապատասխան տառը: Ուստի հունարենում և «δ»-ն, և «χ»-ն արտասանվում են «ց»: Բայց քանի որ հունարեն այբուբենում գոյություն չունի և «ց» տառը, այն արտահայտվում է «τζ»-ով, որ միացյալ «ց» է արտասանվում և ոչ «աղ»: Հայերենում «ճնճղուկը» արտասանվում է «ճընճըղուկ», հունարենում չկա և այդ «ը» հնչյունը, ուստի այն արտահայտվում է որևէ ձայնավորով «լ» «ղ» (ի) կամ «օւ» (ու): Միջնադարում Հայերեն «ղ»-ն արտասանվում էր «լ» (հմմա.՝ Ալեքսանդրօս – Աղեքսանդր, Պլատոն – Պղատոն, “Օլսւուս – Ողիւմպոս և այլն): Ուստի Ճնճղուկը – Ճընճըղուկը հունարենում պիտի դառնար և դարձավ Դցւնցուօնկուս կամ Դցւնցլուօնկուս թինցիլուկ կամ թինցուլուկ<sup>79</sup>: Օտարազգի բյուզանդագետները Հայերեն լեզվին և ձայնաբանությանն անտեղյակ, մեր Հայերիս համար միանգամայն պարզ ու հասկանալի Հայկական տոհմանունները ստուգաբանելիս և բացատրելիս, ստիպված են հավատալ հունարեն տեքստերի գրությանը: Հավանաբար դրանից ելնելով ոռոմինացի բյուզանդագետեալ Մուռնուն բյուզանդական աղբյուրների Դցւնցուօնկուս-ը ստուգաբանում է ... լատիներեն՝ “quinqüe lupi”, ասել է «Հինգ գայլ»<sup>80</sup>: Ստաց-

76 Վ ա ր դ ա ն, էջ 125:

77 Մ ա տ թ ե ռ ս ու ու ռ ու ս հ ա յ ե ց ի, էջ 219:

78 Վ ա ր դ ա ն, էջ 141:

79 Հունարենը չունի և «չ» հնչյունը (և տառը), որով Հայկական Զմշկիկ անունը բյուզանդական աղբյուրներում հանդես է գալիս ողպես Դցւմուկուս – թիմիսկուս:

80 G. M u r i u. L'origine des Comnenes. Bulletin de la Section Historique de l'Academie Roumaine, X (1924), p. 25.

վում է, որ Վասպուրականի Խաչիկ իշխանը իր մի որդուն իշխան է անվանել, մյուսին՝ Հասան, իսկ երրորդին լատիներեն ... Հինգ գայլ: Հավանաբար Սասնա Ծոերի անուս ասմունքողն էլ իմացել է լատիներեն և Սասունցի Դավթի մի եղբորը անվանել ձնճղափոքրիկ<sup>81</sup>:

Մուռնուի այս տարօրինակ ստուգաբանությունից ելնելով է. որ Ա. Կաժդանը ձնճղուկներին զետեղել է իր մենագրության Յ-րդ դլխում, որը, ինչպես նշվեց, վերնագրված է «Ենթադրաբար հայկական ծագումով ընտանիքներ»<sup>82</sup>:

Ձնճղուկների ընտանիքից հայտնի են Կոսմաս Ձնճղուկ (Կօսմաς Տէնտչւլօսկուօչ)՝<sup>83</sup> անունով մի վանական, որին Միքայել IV Պաֆլագոնացի կայսրը (1034-1041 թթ.) վանական ձեռնադրեց, երբ վերջինս, ծանր հիվանդությունից հյուծված, հրաժարվեց գահից<sup>84</sup>: Կոսմաս ձնճղուկը շատ մտերիմ էր նաև Կոստանդին IX Մոնոմախի հետ: Վերջինս 1046 թ. նրան Սուրբ Լեռը (Աթոս) ուղարկեց, ուր նա 180 այլ վանահայրերի և վանականների հետ կազմեց վանական այդ համալիրի «Կանոնադրությունը» (հայտնի որպես «Երկրորդ կանոնադրություն»), որը գործեց երեքուկես դար: Վատիկանի ձեռագրերի հավաքածում պահպում է նրա մի անտիպ երկը: «Ութ լօյցմօս – ների (բանականությունների, դատողությունների) ծոցնաւու – ի (իմացության) մասին»: Հայտնի է հիշյալ վանականի արձնե կնիքը:

Բուլղարիայի Սիլիստրա քաղաքում հայտնաբերված իր արձնե կնիքով հայտնի է և Լեռն Ձնճղուկը: Կնիքի մակագրությունն է. «Հնրիւ թօնիթւ լեօնտւ տա Տէնտչւլօսկու» («Տէր օգնեա Լեռուն Ձնճղուկին»)<sup>85</sup>:

Մագումով վասպուրականցի Ձնճղուկների ընտանիքից Բյուզանդիայում հայտնի էր նաև Անդրոնիկոս Ձնճղուկը (Անδրօնիկոս օ Տէնտչւլօսկուդու<sup>86</sup>): Խաչակրաց առաջին արշավանքի ժամանակ նա գիմադրեց քաղաքը պաշարած Սիկիլիայի նորմանների պարագուխ Տանկրեդին և ի վերջո ստիպված եղավ քաղաքը հանձնել նրան (1102 թ.)<sup>87</sup>:

Բյուզանդական պատմիչ Նիկետոս Խոնիատեսը հիշատակում է կայսերական խարտուլար՝<sup>88</sup> Վասիլ Ձնճղուկին (τον χαρτουλάριον Βασιλειον τον Τէնտչւլօսկον), որ Մանուկի I Կոմնենոսի կայսր հռչակվե-

81 N. A d o n t z. Les fonds historiques de l'épopée byzantine Digenis Akritas. Etudes Armeno-byzantines, Lisbonne, 1965, p. 29, 35.

82 Կ ա յ ա ն Ա ր մ յ ա ն e, c. 107 և սլ.

83 Ձեռագրերում հանդիպում են Տէնտչւլօսկու և Տէնտչւլօսկու գրություններ:

84 Հ ո վ հ ա ն ն ե ս Ս կ ի լ ի ց ե ս, էջ 131:

85 И в а н Й о р д а н о в. Неиздадени византийски оловни печати от Силистра. — Известия на Народния музей във Варна, кн. 19, с. 105—106.

86 А ռ պ է Ս օ մ ն է պ է. Aléxiade, t. III, p. 34.

87 Նույն տեղում, էջ 36:

88 Հայերեն «քարտուղար» բառը հենց այս խարտուլարն է, որ Բյուզանդիայում գործում էր VIII-XI դարերում: Կային տարբեր կատեգորիաների խարտուլարներ, որոնք սուկ գրասենյակային աշխատողներ չէին, այլև, ոչ հաղպատեպ, բանակում և նավատորմում հրամանատարական պաշտոններ էին վարում: Տե՛ս Կ ա յ ա ն Ա ր մ յ ա ն e, c. 108: Նույն մասին նաև N. O i k o n o m i d è s. Les Lists de Préséance byzantines des IXe et Xe siècles. Paris, 1972, p. 313.

լու առթիվ (1143 թ.) Մեծ դոմեստիկոս Հովհաննես Աքսուխի հետ Կոստանդնուպոլիս ուղարկեց՝ կայսեր քաղաք մանելու և գրա հետ կապված հանդիսությունները կազմակերպելու համար<sup>89</sup>: Այս Վասիլ Ճնճղուկին Մանուկի կայսրը 1154/1155 թ. ձմռանը ուղարկեց Բոսնիա, բնիկների ապստամբությունը ճնշելու: Այս գեպքում Նիկետաս Խոնիատեսը խարտուլար Վասիլին անվանում է տրատղօս (զորավար)<sup>90</sup>:

Վասիլ խարտուլար անունով անձնավորություն հիշատակվում է և 1163 թ. մի փաստաթղթում, և Վասիլ պրոտոսպաթար՝ արճճե իր կնիքով հայտնի: Հետագոտոզները սրանց նույնացնում են Նիկետաս Խոնիատեսի հիշատակած խարտուլար Վասիլ Ճնճղուկի հետ: Ա. Կաժդանը այդ նույնացումը անհավանական է համարում<sup>91</sup>: 1163 թ. խարտուլար Վասիլը Սերբիայի ռաչարաՓԵՆՑ-Ն էր, հավանաբար Կոստանդնուպոլսից նահանգներն ուղարկվող անձ, որ տնօրինում էր կագաստրը, որի հիման վրա էլ հարկերն էին գանձվում<sup>92</sup>:

Վերջապես իր արճճե կնիքով է հայտնի ոմն Գրիգոր Ճնճղուկ, վանական և «պռոտոս» («առաջին», Աթոսի վանական համալիրի բոլոր վանքերի տվյալ տարում գլխավորողը): Վ. Լորանը կնիքը թվագրում է XI-XII դդ.<sup>93</sup>:

Նշենք, որ հիշատակված այս ութ Ճնճղուկներից Հրաչյա Աճառյանին միայն երկուսն են հայտնի՝ Մատթեոս Ուռհայեցու հիշատակած Ճնճղուկը՝ Խաչիկ իշխանի որդին, և Լավոդիկիայի կառավարիչ Անդրոնիկոս Ճնճղուկը (Ղ. Ալիշանի միջնորդությամբ, Սիսուան, էջ 47 ա):

Հաջորդ վասպուրականցիները Բյուզանդական կայսրության մեջ հենց «Վասպուրականցի» տոհմանունը կրողներն են, հունարեն բնագրերում՝ Վասորականցի: Սրանք էլ, ըստ Ա. Կաժդանի «Ենթադրաբար հայկական ծագումով ընտանիքների» թվին են պատկանում: «Անվան ստուգաբանությունը, — գրում է նա, — թափանցիկ է՝ Վասպուրականի՝ Հայաստանի հարավային նահանգներից մեկի, բնիկներ, նահանգի, որ մոտավորապես 1021 թ. դարձավ բյուզանդական բանակաթեմ: Արա հիման վրա, — հարց է տալիս Կաժդանը, — հնարավո՞ր է Վասպուրականցիներին ծագումով հայ համարել»<sup>94</sup>:

89 Nicetae Choniatae Historiae, recensuit Ioannes Aloysius van Dieten, Berolini et Novi Eboraci, 1975, p. 48.

90 Նույն տեղում, էջ 101-102:

• 91 Կայձան. Արմանե, с. 108.

92 История Византии в трех томах, т. 2, М., 1967, с. 161—162. Н. П. Лихачев. Моливдовулы греческого Востока. М., 1991, с. 145—146. Հայազգի աւագրաՓԵՆՑ — ների (Անդրոնիկոս Սկլերոս, Միքայել Սկլերոս) մասին տես Werniger Seibt. Die Skleroi... S. 97-102.

93 Կայձան. Արմանե, с. 108.

94 Նույն տեղում, էջ 106: Իր ավելի ուշ Հրատարակած մի Հողվածում «Վասպուրականցիներն» արդեն «հավանաբար հայկական ընտանիք» են (‘Armenian family’), բայց հեղինակը անհրաժեշտ է համարում ցույց տալ, որ այդ ընտանիքի մասին տեղեկությունները «ծայր աստիճան անորոշ են» (‘is extremely vague’): A. Kazhdan. The Armenians in the byzantine ruling class predominantly in the Ninth through Twelfth Centuries. In: T. Samuelian and M. Stoen eds. Medieval Armenian Culture. (University of Pennsylvania Armenian Texts and Studies 6, Chico CA 1983, p. 449).

Վասպուրականցիները բյուզանդական աղբյուրներում հիշատակվում են XI դարի երկրորդ կեսից։ Մեզ համար անմատչելի աղբյուրների հիման վրա Ա. Կաժդանը թվարկում է հետևյալ վասպուրականցիներին։ Լեռն Վասպուրականցի, խոշոր հողատեր Թեսաղոնիկեի շրջանում։ Նիկեփոր III թոտանիատես կայսրը (1078–1081 թթ.) նրան մի ավան շնորհեց, բայց երբ Լեռնը հարեց խոռվարար Պունդեսիին, Ալեքսիոս I կայսրը (1081–1118 թթ.) նրանից, հավանաբար 1083 թ., այն խեց և տվեց ուրիշի։

Երկրորդ մեզ հայտնի Վասպուրականցին՝ Քրիստափորը, ուներ պրոտոպլեգրոսի բարձր աստիճանը և հայտնի է XI–XII դդ. թվագրվող իր արճճե կնիքով։ Ելնելով կնիքի վրա և Թեոդորոսի (զինվորական սրբի) պատկերից, Կաժդանը հավանական է համարում, որ Քրիստափորը զինվորական էր, թեև տյդ բանը պնդել չի փորձում։

Վերջապես երրորդ հայտնի Վասպուրականցին՝ Կոստանդինը, նույնպես պրոտոպլեգրոս, ևս հայտնի է իր արճճե կնիքով, որը Գ. Շլումբերժեն թվագրում է XI – XII դդ. Ա. Կաժդանը, նկատի առնելով նրա տիտղոսը, ավելի հավանական է համարում XI դարը<sup>95</sup>։

Մինչև այժմ խոսքը վերաբերում էր ընդհանրապես վասպուրականցիներին, բայց ունենք նաև փաստեր Վասպուրականի որոշակի քաղաքից սերող և Բյուզանդական կայսրության մեջ ծառայող անձնավորությունների մասին։ Վերևում նշեցինք նշանավոր զորավար և քաղաքական դործիչ, Արևմուտքի մեծ գոմեստիկոս, ազգությամբ հայ, դավանանքով քաղկեդոնիկ-վրացադավան («իրեր») Գրիգոր Բակուրյանին։ Փիլիպուպում իր կառուցած վանքի երեք լեզվով (Հունարեն, Հայերեն, վրացերեն) կազմած Կանոնագրության (1083 թ.) գլխակարգության 30-րդ գլխում նա հիշում է վանքի առաջին վանահայր Գրիգորին, որը մեծ դեր է խաղացել վանքի կառուցման գործում։ Նրան նա անվանում է Գրիգոր Յանևուս – Վանեցի։ Գրիգոր Բակուրյանը հոգ է տարել, որ վերջինիս մահից հետո անգամ նրան պատվել՝ Գրիգոր Աստվածաբանի տոնի օրը նրա հոգեհանգիստը կատարել<sup>96</sup>։

Վերջում կանդ առնենք բյուզանդական արիստոկրատական մի ընտանիքի վրա, որի ոչ միայն ծագման վայրն էր հայտնի, այլև նրա ազգային պատկանելությունը։ Բնականաբար, նա տեղ չի գտել Ա. Կաժդանի վերևում բազմից հիշված աշխատության մեջ։ Խոսքը վերաբերում է Մոնաստերի հոտեսներին (Մօνաσտրուարտց)<sup>97</sup>։ Այս մականունը կրող առաջին ինձ հայտնի անձնավորությունը հանդես է դալիս Նիկեփոր Փոկաս հայագի կայսեր (963–969 թթ.) օրոք։ 965 թ. Նիկեփորի երկրորդ արշավանքին դեպի Կիլիկիա, կայսրը պաշարեց և դրավեց Մոնաստերիան (Մահուր),

95 Կայձան. Արմանե, ս. 106–107.

96 Տυրիկոն Gregorii Pacurianii, ed S. Kauchtschischwili. – Georgica, t. V, Thbilisiis, 1963. Վանքի կառուցումից հարյուր աարի անց նույն վանքի վանահայր էր մի ուրիշ հայ Հովհաննես Աթմացին (Ատմանոս), Ակնի շրջանի Աթմա հայ-Հոռոմ գյուղից։ Տե՛ս R. M. Բարտիկյան. Օ սահմանագործության մասին առաջարկ կայսեր (963–969 թթ.) օրոք։ 965 թ. Նիկեփորի երկրորդ արշավանքին դեպի Կիլիկիա, կայսրը պաշարեց և դրավեց Մոնաստերիան (Մահուր),

97 Նույն մասին աեւ Ա. Կաժդանի մի այլ աշխատության մեջ։ Ա. Պ. Կայձան. Սոցիաльный состав господствующего класса Византии в XI–XII вв., М., 1974.

իսկ կայսեր եղբայր Լևոնը պաշարում էր Տարսոնը: Արշավանքին մասնակից զորահրամանատարներից մեկն էր ահա Հիշլալ Մոնաստերիութեսը, որ մարտում սպանվեց<sup>98</sup>:

XI-XII դարերում Հիշվում են Մոնաստերիութես մականունը Կրող չորս անձնագորություն. Նրանք ունեին բարձր տիտղոսներ՝ վեստարին, պրոտոկուրոպալատ<sup>99</sup>: Դատավոր (կրιτից ուն Յիշլօս) Լևոն Մոնաստերիութեսը Հիշվում է երկու այլ դատավորների հետ, որոնցից մեկը Դեմետրիոս Թոռնիկն էր: Նրանք փորձեցին պաշտպանել Ալեքսիոս II Կոմնենոս կայսեր (1180-1183 թթ.) մորը՝ Մարիա-Քսենեին, երբ դահի հավակնորդ Անդրոնիկոս Կոմնենոսն ուղարկում էր նրան պալատից վոնդել: Կոստանդնուպոլսի ամբոխը Անդրոնիկոսի գրդամք քիչ էր մնացել նրանց կոտորեց<sup>100</sup>: Հետագայում Լևոն Մոնաստերիութեսը դարձավ Անդրոնիկոսի խորհրդականն ու «բերանը սենատում»<sup>101</sup>: 1168 թ. կազմված մի վանքի կանոնադրության տակ ստորագրողներից մեկը դատավոր Լևոն Մոնաստերիութեսն էր<sup>102</sup>: Դեռ որպես դատավոր նա Հիշվում է հսաակիոս II Անդելոսի թագավորության ժամանակ (1185-1195 թթ.)<sup>103</sup>: Հայտնի է նաև եփեսոսի եպիսկոպոս Մոնաստերիութեսը<sup>104</sup>:

Մոնաստերիութեսներից ամենանշանավորը Հովհաննես Մոնաստերիութեսն էր, որին կայսրությունը նշանակեց Հայաստանի (իմա՝ Մեծ Հայքի) և իբերիայի՝ (Տայքի Հողերից, Դավիթ Կուրաղապատի իշխանության տարածքի վրա կազմավորված իբերիայի բանակաթեմի) կատեպան: Անիի հնադիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել է նրա 1059 թվակիր հունարեն արձանագրությունը, որտեղ նա գրում է Անի քաղաքի (պարիսպների<sup>105</sup>) վերանորոգման մասին: Նա արձանադրության մեջ Հիշվում է որպես՝ 'Իանոնոց թեսτարχուս կատεπանո' Արմենիաս և 'Իթորիաս Մոնաստերութուս' («Հովհաննես վեստարին Հայաստանի և իբերիայի կատեպան Մոնաստերիութեսն»)<sup>106</sup>: Նա Հիշվում է նաև Հովհաննես Կիմաքոսի «Սանդուղք աստուածային ելից» երկր եկստաթիոս Բոյիլասի համար 1059 թ. արտադրած դրիչ, վանական թեոդուլոսի հիշտակարանում որպես «Հովհաննես Մոնաստերիութես իբերիայի (կատեպան)» (՝'Իանոնոց Մոնաստերութուս' Հիթորի(աշ))<sup>107</sup>:

Արդ, ինչն է պատճառը, որ մենք Մոնաստերիութեսներին հայ ենք համարում և գտնում, որ նրանք առնչություն ունեն Վասպուրականի հետ:

98 Հ ո վ հ ա ն ն ե ս Ս կ ի լ ի ց ե ս, էջ 20:

99 Կ ա յ ճ ա ն. Սոցիալնայի սостав..., с. 107, 113, 147.

100 Nic, Chon., էջ 265-266: Համակ. Կ. Վ ա ր ջ օ ւ. 'Η γενεαλογία τῶν Κομνητῶν, τόμ. Α, Θεσσαλονική, 1984, σελ. 555- 556.

101 Nic, Chon., p. 312-313. Կ. Վ ա ր ջ օ ւ. նշվ. աշխ., Հ. Ա, էջ 597-598:

102 Ա. Ճ մ ի տ ր ի ե վ ս կ ի յ. Տուրքա, I, 715.

103 Nic, Chon., p. 373.

104 Byzantinische Zeitschrift, VI, 396.

105 Բ. Ի ն է շ է վ ի չ. Տրի Անիական համարության ժամանակակից առաջնային առաջնորդության մասին. Պր. 1921, ս. 19.

106 P. L e m e r e. Cinq études sur le XIe siècle byzantin. Paris, 1977, p. 39.

Հունարեն մօνաστրուօն (մոնաստերիոն) բառը նշանակում է «վանք» «մենաստան», հետեարար Մոնաստերիոտես՝<sup>107</sup> նշանակում է «վանքցի», «մենաստանցի»: Բայց ո՞ր վանքի, ո՞ր մենաստանի: Բյուզանդիայում հազարավոր վանքեր կային, հիշյալ ընտանիքի անունը կոնկրետ ո՞ր մեկից է ծագում: Դա նույնն է, եթե ասենք «եկեղեցացի», «տաճարացի», «քաղաքացի», առանց նշելու ո՞ր եկեղեցուց, ո՞ր տաճարից «քաղաքից»: Բյուզանդիայում կան արիստոկրատական ընտանիքներ, որոնց մականունը կապված է վանքի հետ, բայց կոնկրետ տրվում է այդ վանքի անունը: Օրինակ, Հաղիողախարիտների, Տրիսագիոպախարիտների ընտանիքի անունը կապված է սուրբ Զաքարիայի վանքի կամ այդ վանքի անունը կրող տեղանվան հետ, Կատաֆլորոն մականունը՝ սուրբ Ֆլորոսի վանքի անվան հետ, Մունդանուներինը՝ Կյուզիկոսի շրջանում գտնվող Մունդանոսի վանքի<sup>108</sup>: Հայերենում ունենք Հովհան Մայրավանեցի, Միսիթար Այրիվանեցի և այլն: Մոնաստերիոտեսները թերեւս կապ ունեն Հարավսլավիայում գտնվող Մոնաստիր տեղանվան՝ հետ: Բայց անտիկ շրջանում նրա տեղում Հերակլիա քաղաքն էր, որ բյուզանդական շրջանում դրավվեց բուլղարների կողմից և կոչվեց Բիտոլիս: Քաղաքը Մանաստըր կոչեցին թուրքերը, հետեարար X դարում, երբ հիշվում է առաջին Մոնաստերիոտեսը, նա չէր կարող կրել մի քաղաքի անուն, որ թուրքերն են դրել բնական է XV դարից ոչ առաջ:

Ուստի ստիպված ենք գնալ շատ հեռուն: Ուրարտուի մայրաքաղաքի անունը Բիայնա էր: Թե ինչ է դա նշանակում, հայտնի չէ: Ժամանակի ընթացքում այն կոչվեց Վան, անուն, որ, բնական է, բխում է Բիայնա տեղանունից: Ժողովրդական ստուգաբանությամբ վանը «վանք» է նշանակում: Վանք բառի հոգնականացուցիչ «ք»-ն ածանցյալ բառերում ընկնում է. ունենք «վանահայր», «վանական», «վանակից», «վաներէց»: Անգամ Հայկացյան բառդրքի հեղինակները, անգիտանալով Բիայնայի գոյությանը, դրում են «Վան, որպէս վանք (լծ. և Աւան, յորմէ և Վան քաղաք)», հատոր Բ, էջ 781): Պարզ է, որ Մոնաստերիոտեսը հունարեն թարգմանությունն է հայերեն «վանեցիի»: Ջլ՝ որ ունենք և «չթարգմանվածը» Գրիգոր Բակուրյանի կանոնագրության Վանինոս-Վանեցին: Հարցն այլ է: Բոլոր Մոնաստերիոտեսները արդյոք նույն ընտանիքին են պատկանում, թե կան այդպիսիք, որ պարզապես վանեցի են, կապ չունեն այդ մականվամբ որոշակի բնտանիքի հետ: Դա կարոտ է առանձին հետազոտության:

Մենք հավակնությունը չունենք պնդելու, թե ներկայացրել ենք XI-XII դդ. Բյուզանդիայում գործած բոլոր վասպուրականցիներին: Սույն հոդվածը թող համարվի այդ ուղղությամբ կատարված մի փոքր փորձ:

107 Եթե հայերենը ծննդյան, ծագման, սերման, բնակության վայր ցույց տվող ածանդը՝ ցի (ացի, եցի) է, հունարենը ավելի հարուստ է. ուտես՝ (Անիոտես, Մոնաստերիոտես), իւսես (Վասպուրականիտես, Տարոնիտես), ենոս (Դալասենոս, Վանձակենոս), ատես (Խոնիտես), ինոս (Վանինոս, Ալեքսանդրինոս), ենոս (Միակիլինենոս, Կորոնենոս) և շատ ուրիշներ:

108 Կ ա յ ճ ա ն. Սույնականաց համարված տեսական պատճենները պահպանվում են Հայաստանի պատմական թանգարանում:

ВАСПУРАКАНЦЫ НА СЛУЖБЕ ВИЗАНТИЙСКОЙ  
ИМПЕРИИ В XI—XII ВЕКАХ

РАЧ БАРТИКЯН

Р е з ю м е

Со второй половины IX в., одновременно с ослаблением Арабского халифата, Византия начинает завоевывать армянские территории, утерянные ею еще в начале VIII в. В 1021 г. "мирным путем" переходит в пределы империи Васпуракан. Его последний царь – Сенекерим-Арцруни – получает взамен город Севастию (центр II Армении Юстиниана I) с окрестой и вместе с семьей, своей знатью и множеством народа переходит в Византию. В дальнейшем отдельные члены его семьи, представители его знати поступают на службу в империи. Известны представители семьи Сенакхеримов, т. е. лица, непосредственно связанные с семейством Сенекерима Арцруни, Цинцилуров (арм. Յնձուկ՝ воробей), от имени Цинцилука, сына васпураканского князя Хачика, Васпураканитов (т. е. васпураканцев) и Монастириотов, фамильное имя которых есть ничто иное, как греческий перевод "Ванеци", т. е. "по происхождению из города Вана", столицы Васпуракана. Топоним "Ван", происходящий от Биайны, названия государства Урарту (Ванского царства), в дальнейшем – вплоть до конца XIX в. воспринималось армянами как армянское слово, означающее "монастырь".

VASPOURAKANIANS AT THE SERVICE OF THE BYZANTINE EMPIRE  
IN THE 11–12th CENTURIES

HRACH BARTIKYAN

S u m m a r y

Since the second half of IX century, along with the weakening of the Arab caliphate, Byzantium started to conquer Armenian territories, which it had lost as far back as at the beginning of VIII century. In 1021 Vaspourakan "peacefully" passed into the frontiers of the Byzantine Empire. The last king of Vaspourakan – Senekerim Artsrouni, got in exchange the Sebasteia city (the center of the II Armenia of Justinian I) with neighbourhood and with his family, nobility, a great many of people passed to Byzantium. Later on, some members of his family, representatives of his nobility went to service in the empire. We know about the representatives of the Senakherims'family, i. e. persons, who were directly related to the family of Senekerim Artsrouni, the Tsintsilouks, who take their family name from name of Tsintslouk, son of the Vaspourakanian prince Khachik (Armenian word Յնձուկ means sparrow). Vasprakanits (i. e. Vaspourakanians) and Monastiriots, whose family name is nothing else but the Greek translation of the word "Vaneysi", i. e. "by birth from city of Van", capital of Vaspourakan. Right up till the end of XIX century Armenians interpreted the toponyme "Van" descent from Biayna – name of the Urartu state (Kingdom of Van), as an Armenian word, meaning "monastery".